«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Երևանի պետական համալսարանի ռեկտոր,

պատմական գիտությունների դոկտոր

Հ.Հովհաննիսյան

18 հուլիսի 2024թ.

ԿԱՐԾԻՔ

առաջատար կազմակերպության

Միքայել Արմենի Նավասարդյանի «ՀՆԱ արտադրության արդյունավետության գնահատումը տնտեսական աճի որակի բարելավման համատեքստում (ՀՀ նյութերով)» *թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար*

Ատենախոսությունը քննարկվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Կառավարման և գործարարության» ամբիոնի 17.07.2024թ. կայացած նիստում (արձանագրություն թիվ 16):

Քննարկմանը մասնակցում էին «Կառավարման և գործարարության» ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հ. Հակոբջանյանը, ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Գ. Խաչատրյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Հ.Լ. Սարգսյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Գ. Աբրահամյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Ի. Վարդանյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Գ. Գևորգյանը, տ.գ.թ., պրոֆեսոր Ա.Հ. Համբարձումյանը, տ.գ.թ., դոցենտ Վ.Ս.Ալեքսանյանը, տ.գ.թ., դոցենտ Ն.Է. Միրզոյանը, տ.գ.թ., դոցենտ Ն.Ն. Խաչատրյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Ռ. Գալստյանը, տ.գ.թ., տ.գ.թ., դոցենտ Վ.Գ. Գյոզալյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Ա. Բարխուդարյանը և ասիստենտ Ա.Ֆ. Մկրտչյանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից հետազոտություններում տնտեսագետները հաճախ հանդես են գալիս տնտեսական աճի և հասարակության բարեկեցության միջև խզումը փաստող տարբեր էմպիրիկ ապացույցներով: Ստացվում է, որ տնտեսական աճի ուսումնասիրությունը ենթադրում է ոչ միայն քանակական, այլև որակական փոփոխություններ: Այդպիսով երկրի զարգացման մակարդակը գնահատելու խնդիրը վերջին տասնամյակներին ազգային եկամուտների հաշվառումից տեղափոխվում է դեպի մարդակենտրոն չափումների հարթություն: Այս համատեքստում ակադեմիական շրջանակների ուսումնասիրություններն առավելապես միտված են աճի ոչ թե քանակի, այլ որակի գնահատման ու բարելավման ուսումնասիրությանը:

Քանզի ժամանակակից աշխարհում գործնականորեն տնտեսական աճին ամենամեծ նպաստում ունեցող գործոնը ՀՆԱ արտադրության արդյունավետությունն է, տնտեսական աճի որակական բնութագրի մեջ հատկապես կարևոր է տնտեսական արդյունավետությունը: Վերջինս հիմնաքարային դեր ունի մրցակցությանը դիմակայելու, շուկայում կայուն դիրք պահպանելու, ինչպես նաև աճի նոր հնարավորությունների ձևավորման հիմնահարցերում:

Այսպես, ՀՀ տնտեսական աճի գնահատումը որակական չափումներում և ՀՆԱ արտադրության արդյունավետության գնահատման տարաբնույթ մեթոդների կիրառումը կարող է ոչ միայն նպաստել ՀՀ-ում առավել արդյունավետ և որակյալ աճի քաղաքականությունների մշակման գործում, այլև հիմք հանդիսանալ տնտեսական աճի նորովի դիտարկմանը, մեկնաբանմանն ու ուսումնասիրությանն ուղղված նոր հետազոտությունների համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակը ՀՀ ՀՆԱ արտադրության արդյունավետության և տնտեսական աճի որակի վերլուծությունն ու գնահատումն է: Նշյալ նպատակի իրագործման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել արտադրողականության և տնտեսական արդյունավետության գնահատման միջազգային փորձը, դուրս բերել առավել տարածված մոտեցումները և մեթոդները, դրանց միջոցով գնահատել ՀՀ ՀՆԱ արտադրության արդյունավետությունը, դրա դինամիկան և կառուցվածքը,
2. բացահայտել ՀՆԱ արտադրության արդյունավետության դերը տնտեսական աճի որակի ձևավորման և դրսևորման գործընթացներում,
3. բացահայտել ՀՀ տնտեսության կառուցվածքային առանձնահատկությունները՝ ըստ ոլորտների և վարչատարածքային միավորների, և դուրս բերել դրանցում նկատվող որակական դրսևորումները,
4. հետազոտել տնտեսության որակի ընդհանուր բնութագիրը, ուսումնասիրել դրա վերաբերյալ մասնագիտական գրականության անդրադարձը, դրա գնահատման միջազգային փորձը և մոտեցումները, ձևավորել տնտեսական երևույթների և ցուցանիշների այնպիսի համակարգ, որը համալիր կերպով կնկարագրի տնտեսության որակական նկարագիրը,
5. գնահատել և վերլուծել ՀՀ տնտեսության որակն ու դրա դինամիկան,
6. բացահայտել ՀՀ տնտեսական աճի և դրա որակի միջև խզումը,
7. մոդելավորել տնտեսության որակը, ստացված մոդելը կիրառել ՀՀ նյութերով և դրա միջոցով աջակցել տնտեսության որակի բարելավմանն ուղղված քաղաքականության մշակմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Գիտական նորույթ պարունակվում է հետազոտության հետևյալ արդյունքներում՝

1. Պարամետրային և ոչ պարամետրային մեթոդներով, մասնավորապես՝ համապատասխանաբար Մալմքվիսթի համաթվի և ստոխաստիկ սահմանի մոդելի կիրառմամբ գնահատվել է ՀՀ՝ ՀՆԱ արտադրության արդյունավետությունը:

2. Մալմքվիսթի համաթվի միջոցով դուրս են բերվել ՀՀ ընդհանուր գործոնային արտադրողականության կառուցվածքը բացատրող քանակական գնահատականները:
3. Որոշվել է ՀՀ տնտեսության ճյուղային, ներճյուղային և տարածքային կենտրոնացվածության մակարդակներն ու գնահատվել դրանց փոխառնչությունը երկրի ՀՆԱ ծավալների փոփոխություններին:
4. Մշակվել է տնտեսական արդյունքի որակի համաթվի հաշվարկման մեթոդաբանություն, որի հիման վրա գնահատվել է ՀՀ տնտեսության որակը, դրա դինամիկան, կայունությունը և կառուցվածքը:
5. Մշակվել է տնտեսության որակի սիմուլյացիոն մոդել, որը հնարավորություն է տալիս դիտարկել երկրի տնտեսության որակի փոփոխությունները իմիտացված տարբեր շոկերի պարագայում, ինչպես նաև տնտեսության որակի բարելավման քաղաքականության համար մշակել հասցեական լուծումներ: Տնտեսական արդյունքի որակի մշտադիտարկման համար, մշակված համաթվի և մոդելի հիման վրա ստեղծվել է առցանց հարթակ, որտեղ կարելի է նաև իրականացնել համապատասխան սիմուլյացիաները և հետևել համակարգի վարքագծի փոփոխություններին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է գիտական հետազոտության նպատակով, խնդիրներով և տրամաբանությամբ: Ատենախոսությունը շարադրված է 174 էջի վրա, բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, ներառում է 20 գծապատկեր և 26 աղյուսակ:

«Ներածության» մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, սահմանված են հետազոտության նպատակը, խնդիրները, օբյեկտը, առարկան, ներկայացվել են ուսումնասիրության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթները և ստացված արդյունքների գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Տնտեսության արդյունավետության և որակի ուսումնասիրության տեսամեթոդաբանական հարցերն ու գնահատման միջազգային փորձը»** գլխում դիտարկվել են տնտեսական աճի շրջանակներում քննարկվող կարևորագույն հասկացությունները, ներկայացվել «տնտեսական արդյունավետություն» եզրույթի սահմանումները, դրա դասակարգումը, գնահատման մոտեցումները և եղանակները: Այնուհետև դուրս են բերվել տնտեսական արդյունավետության գնահատման միջազգային փորձի հիմնական էմպիրիկ ձեռքբերումները՝ շեշտադրելով աշխատանքի հիմքում ընկած տեսական և մեթոդաբանական հիմնահարցերը, որից հետո ուսումնասիրվել է տնտեսական աճի որակի բնութագիրն ու դրա գնահատման միջազգային փորձը: Հաջորդիվ գնահատվել և վերլուծվել են արտադրության գործոնների նպաստումները տնտեսական աճին և դրանց արտադրողականության մակարդակները:

Ատենախոսության երկրորդ՝ **«Տնտեսական արդյունավետության և տնտեսական աճի որակի գնահատումը»** գլխում ներկայացվել են տնտեսական արդյունավետության գնահատման տարածված եղանակների մեթոդաբանական սկզբունքները: Հաջորդիվ միջին եկամուտ ունեցող երկրների շրջանակում պարամետրային և ոչ պարամետրային մեթոդներով, մասնավորապես՝ համապատասխանաբար ստոխաստիկ սահմանի մոդելի և Մալմքվիսթի համաթվի կիրառմամբ գնահատվել են ՀՀ՝ ՀՆԱ արտադրության արդյունավետությունը, դրա աճի տեմպերը և կառուցվածքը, համեմատվել մյուս երկրների ցուցանիշների հետ:

Հաջորդիվ գնահատվել և ուսումնասիրվել են վերջին տասնամյակի ընթացքում ՀՀ տնտեսության կառուցվածքային առանձնահատկությունները: Մասնավորապես, գնահատվել են երկրում կենտրոնացվածության մակարդակներն՝ ըստ տնտեսության ճյուղերի և վարչատարածքային միավորների, ընդ որում՝ վերջինս և՛ Երևանը ներառյալ, և՛ առանց մայրաքաղաքի կազմերով: Այնուհետև, համադրելով ստացված կենտրոնացվածության գործակիցների և իրական ՀՆԱ դինամիկան՝ դուրս են բերվել ՀՀ տնտեսության կառուցվածքում դրսևորվող որակական դրական և բացասական ցուցիչները:

Երկրորդ գլխի վերջում մշակվել է տնտեսական աճի որակի գնահատման նոր, ավելի համալիր մոտեցում, քան մինչ օրս իրականացված գնահատականների մեծ

մասի հիմքում է, որոնք առավելապես կենտրոնացած են տնտեսական աճի միայն սոցիալական բաղադրիչի վրա: Գտնում ենք, որ աճը որակյալ անվանելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև ՀՆԱ-ի ձևավորման նախապայմանները, պատճառները, դրա ձևավորմանն ուղղված ջանքերը, արդյունավետությունը, հետագա աճի համար բարենպաստ պայմաններ ստեղծելու կարողությունը և մակրոֆունդամենտալ տարբեր գործոններ: Աշխատանքում հաշվարկված աճի որակի համաթիվը բացի աճի սոցիալական դրսևորումներից ներառում է նաև աճի որակի վերոնշյալ բնութագրիչները ևս: Այսպես, երկրորդ գլխի վերջում, առաջադրելով տնտեսության որակի գնահատման նկարագրված փուլային մոտեցում, ամեն փուլի համար ձևավորելով համապատասխան ցուցանիշների համակարգ և դրանցից յուրաքանչյուրի կշիռն այդ համակարգում, հավաքագրելով, մշակելով, նորմավորելով և ագրեգացնելով ընտրված ցուցանիշների՝ 2005-2022 թվականների տարեկան տվյալները, 78 երկրի համար հաշվարկվել է տնտեսական արդյունքի որակի համաթիվ (ՏԱՈՀ): Վերջինս էլ բաղկացած է երկու ենթահամաթվերից՝ տնտեսական արդյունքի որակի ձևավորման համաթիվ (ՏԱՈՁՀ) և տնտեսական արդյունքի որակի դրսևորման (ՏԱՈԴՀ) համաթիվ:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ տնտեսության որակի վերլուծությունը և դրա բարելավման պլանավորումը»** գլխում վերլուծվել են ՀՀ ՏԱՈՀ դինամիկան, աճի տեմպերը, կայունությունը, կառուցվածքը և դրանում դրսևորվող անհամաչափությունները, ընդ որում՝ այս ամենը ոչ միայն առանձին ՀՀ ցուցանիշների կտրվածքով, այլև դիտարկվող բոլոր երկրների, առաջատարների և ամենացածր վարկանիշ ունեցողների, ՀՀ հարևան երկրների, ինչպես նաև շնչի հաշվով ՀՆԱ գրանցած ՀՀ-ին հարակից երկրների շրջանում: Գնահատված համաթիվը համադրվել է Հայաստանի ՀՆԱ-ի հետ, դուրս են բերվել դրանց միտումներն ու տարբերությունները:

Հաջորդիվ մշակված համաթվի մեթոդաբանական հենքով կառուցվել է տնտեսության որակի սիմուլյացիոն մոդել, որը մի կողմից հնարավորություն է տալիս դիտարկել երկրի տնտեսության որակի փոփոխությունները իմիտացված տարբեր շոկերի պարագայում: Այն կիրառվել է ՀՀ օրինակով՝ սիմուլյացնելով տնտեսությունում գրանցված հիմնական շոկերի հետճգնաժամային տարիների

իրավիճակը տնտեսության ներկայիս իրավիճակի վրա, և այնուհետև դիտարկվել են դրանց արդյունքում ՀՀ տնտեսության որակի փոփոխությունները: Մյուս կողմից մշակված մոդելը տալիս է տնտեսության որակի բարելավման քաղաքականության մշակմանը նպաստող իմիտացիոն գործիքակազմ: Վերջինիս միջոցով աշխատանքում նկարագրվել է 3 տարում ՀՀ տնտեսության որակի ավելի քան 24%-ով բարելավման ծրագիր, որի արդյունքում այլ հավասար պայմաններում ՀՀ ՏԱՈՀ-ն հնարավոր կլինի ընդհուպ մոտեցնել դիտարկված 78 երկրների միջինին: Մասնավորապես հաստակ նկարագրվել է, թե ՏԱՈՀ թիրախային մակարդակին հասնելու համար յուրաքանչյուր տարում տնտեսության որակի աճի ինչպիսի կառուցվածք պետք է ապահովել: Աշխատանքի վերջում ներկայացվել է տնտեսական արդյունքի որակի մշտադիտարկման համար մշակված առցանց հարթակ, որը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրել դիտարկված երկրների տնտեսության որակը, դրանց դինամիկան և կառուցվածքը, ինչպես նաև իրականացնել նշված սիմուլյացիաները և դիտարկել դրանց՝ երկրի տնտեսության որակի արձագանքը:

Ատենախոսության **եզրակացություններում** ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները, ինչպես նաև կատարվել են առաջարկություններ՝ ուղղված ՀՀ տնտեսության արդյունավետության և որակի բարելավմանը:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացված ատենախոսության վերաբերյալ առկա են նաև որոշակի թերություններ և բացթողումներ, որոնցից հիմնականներն են.

1. Աշխատանքն էապես կշահեր, եթե տնտեսական աճի որակական ասպեկտներին վերաբերող խնդիրներն արտացոլող 1.2 և 1.3 ենթագլուխների շրջանակում հեղինակի կողմից ուսումնասիրվեր նաև տնտեսագիտության նոբելյան մրցանակակիրներ Ջոզեֆ Ստիգլիցի, Ամարտյա Սենի և ֆրանցիացի ականավոր տնտեսագետ Ժան-Պոլ Ֆիտտուսսիի համահեղինակած «Missmeasuring our Lives: Why GDP doesn't add up, The Report by the Commision on the Measurement of Economic Performance and Social Progress» (2010) ֆունդամենտալ աշխատությունը, որի հիմնական նպատակն է

հանդիսացել ուսումնասիրել, որքանով է ՀՆԱ-ն տնտեսական զարգացման և սոցիալական առաջընթացի հուսալի ցուցիչ: Հետազոտության արդյունքները խիստ տպավորիչ են և ուշագրավ:

2. ՀՆԱ-ի արդյունավետության և դրա աճի որակի բարելավման հիմնական գործոնների թվում առնվազն ուշադրության է արժանի կուտակված ազգային հարստության ցուցանիշը, որը նույնական չէ հիմնական կապիտալի համախառն կուտակման (Cross Fixed Capital Formation) ցուցանիշի հետ: Վերջինս տարեկան ցուցանիշ է, մինչդեռ ազգային հարստության ցուցանիշը ցույց է տալիս կուտակված ազգային ակտիվների մակարդակը դիտարկվող t_0 պահի դրությամբ և մեծապես պայմանավորում է առաջին հեթին ՀՆԱ կառուցվածքային ասպեկտը: Այս առումով օգտակար կլիներ ՀԲ կողմից հրապարակվող «The Changing Wealth of Nations» ամենամյա հաշվետվությունների տվյալների ուսումնասիրությունը:

3. Ատենախոսության 5-րդ նորույթում ասվում է, որ «Մշակվել է տնտեսության որակի սիմուլյացիոն մոդել, որը հնարավորություն է տալիս դիտարկել երկրի տնտեսության որակի փոփոխությունները իմիտացված տարբեր շոկերի պարագայում, ինչպես նաև տնտեսության որակի բարելավման քաղաքականության համար մշակել հասցեական լուծումներ»: Այս պնդումը կոռեկտ չէ, քանի որ ներկայացված սիմուլյացիոն մոդելը ունի բազմաթիվ թերություններ, որոնք հնարավորություն չեն տա այն օգտագործել «քաղաքականության համար հասցեական որոշումներ մշակելու նպատակով»:

Մոդելի թերությունները կայանում են հետևյալում.

- Սիմուլյացիոն մոդելը հիմնված չէ որևէ հաշվարկված մոդելի վրա, այլ պարզապես արտացոլում է կամայական կառուցված ինդեքսի փոփոխությունը՝ նրանում ընդգրկված գործոնների փոփոխության դեպքում:
- Ինդեքսի հաշվարկը և կանխատեսումներն իրականացվում են կամայականորեն ընտրված 78 երկրների ցուցանիշների հիման վրա: Ստացվում է, որ եթե երկրների այլ ընտրանք վերցնենք, ապա արդյունքները

այլ կլինեն: Սա անթույլատրելի է «քաղաքականության համար հասցեական որոշումներ մշակելու» դեպքում:

- Ընտրված ցուցանիշները «քաղաքականության համար հասցեական որոշումներ մշակելու նպատակով» անընդունելի են, քանի որ հնարավոր չէ այդ ցուցանիշների հիման վրա կառավարիչների կողմից որևէ ազդեցություն ունենալ: Օրինակ՝ երջանկության համաթիվը, որն աղյուսակ 26-ում առաջարկվում է հաջորդ տարի բարձրացնել 10.19%:
- Սիմուլյացիոն մոդելի միջոցով Հայաստանի համար երաշխավորությունները անիրական են, քանի որ ենթադրվում է, որ մյուս 78 երկրներում որևիցե փոփոխություն տեղի չի ունենալու:
- Սիմուլայցիոն մոդելը հաշվի չի առնում գործոնների միջև կապերը, ինչը նույնպես երաշխավորությունները դարձնում է անիրական:

4. Աշխատանքում կան մի շարք սխալներ, որոնք կարող են և վրիպակներ լինել, օրինակ՝ բանաձև (2)-ը սխալ է, համեմատելով աղյուսակ 25-ը և 26-ը նկատելի է, որ դրանցում կան հակասող տեղեկություններ, մասնավորապես աղյուսակ 25-ից կարելի է ենթադրել, որ հեղինակն առաջարկում է ավելացնել «ածխաթթու գազի արտանետումները», իսկ աղյուսակ 26-ում հակառակն է գրված:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված դիտողությունները չեն նսեմացնում ատենախոսության արժանիքները, այլ ակնկալում են, որ դրանք հաշվի կառնվեն հեղինակի կողմից իր հետագա հետազոտություններում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը և արտացոլում հետազոտության հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով՝ Միքայել Արմենի Նավասարդյանի «ՀՆԱ արտադրության արդյունավետության գնահատումը տնտեսական աճի որակի բարելավման համատեքստում (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
«Կառավարման և գործարարության» ամբիոնի վարիչ,
տ.գ.թ., դոցենտ՝ Ա. Հ. Հակոբջանյան

Գրախոսներ՝

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
«Կառավարման և գործարարության» ամբիոնի դոցենտ,
տ.գ.թ.՝ Վ. Գ. Գյոզալյան

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
«Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման»
ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ.՝ Ռ. Ա. Գևորգյան

Ա.Հ. Հակոբջանյանի, Վ.Գ. Գյոզալյանի, Ռ.Ա. Գևորգյանի ստորագրությունները հաստատում եմ

ԵՊՀ գիտական քարտուղար, տ.գ.թ., դոցենտ՝ Մ. Վ. Հովհաննիսյան